ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# Հայաստանի Հանրապետության 2017թ. խոշորացվող համայնքների նկարագրություն

# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ

## համայնք

**(Գյուլագարակ, Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո և Վարդաբլուր բնակավայրեր)**

Հեղինակ՝ Սարգիս Թովմասյան

Երևան – 2017

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ**

Գյուլագարակ խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում են Գյուլագարակ (համայնքի կենտրոն), Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո և Վարդաբլուր գյուղերը:

Համայնքի կազմավորումը նպատակ ունի ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանում կազմավորել տարաբնակեցման համակարգի նոր տեղային (զարգացման) կենտրոն, ինչը թույլ կտա ապահովել հանրային ծառայությունների հասանելիությունը համայնքի կազմում ընդգրկվող գյուղերի բնակչության համար:

Համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 18201 մարդ, վարչական տարածքը կազմում է 11811 հա:

**Փնջի ընդհանուր նկարագիրը**

Համայնքի բնակավայրերի գտնվում են Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանում՝ Բազումի լեռների և Ջորագետի միջև ընկած նախալեռնային գոտում՝ ծովի մակերևույթից 1260մ-ից (Կուրթան) մինչև 1475մ (Պուշկինո) բարձրությունների վրա: Կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ:

Բնակչության զբաղվածության հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է: Զբաղվում են դաշտավարությամբ, պտղաբուծությամբ (տանձ, խնձոր, կեռաս), մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաներ, կարտոֆիլ: Զբաղվում են նաեւ խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:

Ամրակիցում և Կուրթանում գործում են վերամշակող ձեռնարկություններ:

Տարածաշրջանի լեռնանտառային լանդշաֆտները և ռեկրեացիոն ռեսուրսները նպաստավոր պայմաններ են ստեղծում էկոտուրիզմի, առողջարանների և հանգստյան տների ցանցի զարգացման համար:

Համայնքի բնակավայրերի հիմնախնդիրների մեջ կարևորվում են ներհամայնքային ճանապարհների վերանորոգումը, խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգումը (Գյուլագարակ, Ամրակից, Կուրթան, Պուշկինո, Վարդաբլուր) ոռոգման ցանցի կառուցումը կամ արդիականացումը (Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Վարդաբլուր), ինչպես նաև առանձին ենթակառուցվածքների կառուցումը:

***Համայնքի փվլալների համադրում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով» սահմանված՝ խոշոր համայնքի փեսլականի պայմանների և խոշորացման չափորոշիչների հեփ***

*1. Տեսլականով սահմանված՝ բավարար մարդկային ռեսուրսների պայման և խոշորացման չափորոշիչներից՝ առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենփրոնի առկայություն.*

Համայնքի կազմում ամենախոշոր բնակավայրը Գյուլագարակն է՝ բնակչության 2642 թվաքանակով (Աղյուսակ 1), ամենափոքրը՝ Պուշկինոն (298 բնակիչ):

Մտահոգիչ են Ամրակից, Գարգառ, Պուշկինո, Վարդաբլուր և Կուրթան գյուղերի բնակչության նվազման միտումները: Ընդհանուր առմամբ, համայնքի կազմում մտնող բնակավայրերի բնակչությունը 2001-2016 թ.թ. պակասել է 15 տոկոսով: Անհամեմատ բարվոք է Գյուլագարակի բնակչության շարժընթացի պատկերը. այն նշված ժամանակահատվածում ավելացել է 13 տոկոսով:

Բնակչության խտության ցուցանիշը ցանկալի նվազագույնից պակաս է միայն նախկին Պուշկինո համայնքում, իսկ խոշորացվող համայնքում և դրա կազմում ընդգրկվող մյուս գյուղերում բնակչության խտության ցուցանիշը բավարար մակարդակի վրա է:

Աղյուսակ 1. Գյուլագարակ խոշորացվող համայնքի բնակչության շարժընթացը և խտությունը

| | Համայնք բնակավայր | Նախկին վարչական տարածքը /հա/ | Հաշվառված բնակչություն | | բնակչ.փոփոխութ. Տոկոս | Բնակչության խտությունը/մարդ/քառ.կմ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2001թ. | 2016թ. | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Գյուլագարակ | 1552 | 2346 | 2642 | 113 | 170 |
| 2 | Ամրակից | 1215 | 675 | 550 | 81 | 45 |
| 3 | Գարգառ | 1458 | 1546 | 1347 | 87 | 92 |
| 4 | Կուրթան | 1919 | 2032 | 2026 | 100 | 106 |
| 5 | Հոբարձի | 602 | 814 | 836 | 103 | 139 |
| 6 | Պուշկինո | 1808 | 411 | 298 | 73 | 16 |
| 7 | Վարդաբլուր | 1528 | 1528 | 1313 | 86 | 86 |
| | Ընդամ./միջին | 10082 | 9352 | 9012 | 96 | 89 |

*__2. Տեսլականով սահմանված՝ բավարար բնական ռեսուրսներով ապահոված լինելու պայման__*

Մեկ բնակչի հաշվով քաղաքացիների և համայնքային սեփականության գյուղատնտեսական հողերի ամենամեծ ծավալները նախկին Պուշկինո համայնքում են՝ համապատասխանաբար 1.86 և 3.05 հա (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական, հատուկ պահպանվող տարածքների, անտառային և արդյունաբերական նշանակության հողերը Գյուլագարակ խոշորացվող համայնքում

| | Համայնք /բնակավայր/ | Հաշվառված բնակչություն 2016թ. | Գյուղատնտեսական հողեր | | | | | | Հատուկ պահպանվող տարածքներ | Անտառային | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Քաղաքացիների սեփականություն | Համայնքի սեփականություն | Պետական սեփականություն | 1 բնակչի հաշվով | | | | | |
| | | | | | | Քաղաքացիների սեփականություն | Համայնքի սեփականություն | Ընդամենը | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուլագարակ | 2642 | 970.5 | 352.2 | 335.4 | 0.37 | 0.13 | 0.50 | 13.4 | 571.2 | 32.4 |
| 2 | Ամրակից | 550 | 553.8 | 450.0 | 44.9 | 1.01 | 0.82 | 1.83 | 6.4 | 161.0 | 56.5 |
| 3 | Գարգառ | 1347 | 697.8 | 412.1 | 796.9 | 0.52 | 0.31 | 0.82 | 7.2 | 1447.9 | 5.0 |
| 4 | Կուրթան | 2026 | 706.2 | 743.1 | 5.8 | 0.35 | 0.37 | 0.72 | 28.3 | 388.8 | 21.1 |
| 5 | Հոբարձի | 836 | 345.6 | 174.5 | 228.6 | 0.41 | 0.21 | 0.62 | 2.0 | 167.1 | 3.6 |
| 6 | Պուշկինո | 298 | 553.2 | 910.0 | 4413.9 | 1.86 | 3.05 | 4.91 | 12.5 | 1275.0 | 14.9 |
| 7 | Վարդաբլուր | 1313 | 770.9 | 533.8 | 79.5 | 0.59 | 0.41 | 0.99 | 15.6 | 60.8 | 9.7 |
| | Ընդամ./միջին | 9012 | 4597.9 | 3575.8 | 5904.9 | 0.51 | 0.40 | 0.91 | 85.5 | 4072.0 | 143.2 |

Չնայած նախկին Գյուլագարակ համայնքում նշված հողերը զգալիորեն պակաս են հանրապետության միջին ցուցանիշից և կազմում են ընդամենը 0,5 հա, խոշորացվող համայնքում այդ ցուցանիշը նույնիսկ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշին՝ հավասարվելով 0.91 հեկտարի:

Խոշորացվող համայնքում կան նաև պետական սեփականության ավելի քան 5,9 հազար հեկտար գյուղատնտեսական հողեր, որոնց գրեթե 75 տոկոսը գտնվում է նախկին Պուշկինո համայնքի տարածքում:

Համայնքի կազմում ավելի քան 4 հազար հեկտար կազմող անտառային ֆոնդի հողերի մեծ մասը նախկին Գարգառ և Պուշկինո համայնքների տարածքներում են:

Բավարար քանակի արտադրական նշանակության հողեր կան նախկին Ամրակից և Գյուլագարակ համայնքներում, որոնց գումարային մակերեսը կազմում է խոշորացվող համայնքի արտադրական հողերի 62 տոկոսը:

*3. Համայնքների խոշորացման փեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայման*

Խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվող նախկին համայնքներից սեփական եկամուտները մեկ բնակչի հաշվով հանրապետության միջին ցուցանիշից բարձր են միայն նախկին Ամրակից և Պուշկինո համայնքներում (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Սեփական եկամուտների ծավալները Գյուլագարակ համայնքում

| | Համայնք /բնակավայր/ | Հաշվառված բնակչություն 2016թ. | Սեփական եկամուտ | |
|---|---|---|---|---|
| | | | 2013-2015թ.թ. տարեկան միջին /հազ.դրամ | 1 բնակչի հաշվով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Գյուլագարակ | 2642 | 11853 | 4.5 |
| 2 | Ամրակից | 550 | 5790 | 10.5 |
| 3 | Գարգառ | 1347 | 7031 | 5.2 |

|  |  |  |  |  |
|---|---|---|---|---|
| 4 | Կուրթան | 2026 | 11607 | 5.7 |
| 5 | Հոբարձի | 836 | 3980 | 4.8 |
| 6 | Պուշկինո | 298 | 3578 | 12.0 |
| 7 | Վարդաբլուր | 1313 | 8631 | 6.6 |
|  | Ընդամ./միջին | 9012 | 52469 | 5.8 |

Ընդհանուր առմամբ, խոշորացվող համայնքում այդ ցուցանիշը հանրապետական միջին ցուցանիշից պակաս է 1.5 հազար դրամով:

*4. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև տրանսպորտային կապերը և ավտոմոբիլային ճանապարհների վիճակը*

Աղյուսակ 4-ում ներկայացված է Գյուլագարակ համայնքում տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակի ընդհանուր պատկերը: Բերված տվյալները ցույց են տալիս, որ համայնքի կազմում ընդգրկվող բոլոր գյուղերը գտնվում են համայնքի կենտրոնից բարենպաստ հասանելիության տիրույթում:

Աղյուսակ 4. Տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակը Գյուլագարակ համայնքում

|  | Համայնք (բնակավայր) | Բարձրությունը ծովի մակերևույթից | հեռավորությունը համ.կենտրոնից |  | Հասանելիության ցուցիչ | Ճանապարհի վիճակը |
|---|---|---|---|---|---|---|
|  |  |  | կմ | րոպե |  |  |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Գյուլագարակ | 1370 | 27,3* | 38 |  |  |
| 2 | Ամրակից | 1380 | 5,5 | 6 | Բարենպաստ | Բավարար |
| 3 | Գարգառ | 1410 | 7.5 | 12 | Բարենպաստ | Բավարար |
| 4 | Կուրթան | 1260 | 7.6 | 10 | Բարենպաստ | Բավարար |
| 5 | Հոբարձի | 1345 | 2.9 | 5 | Բարենպաստ | Հիմնանոր.կարիք |
| 6 | Պուշկինո | 1475 | 6,3 | 11 | Բարենպաստ | Ընթացիկ նոր.կարիք |
| 7 | Վարդաբլուր | 1320 | 3.2 | 6 | Բարենպաստ | Բավարար |

**Հեռավորությունը մարզկենտրոնից*

Ընդհանուր առմամբ, բավարար է նաև ճանապարհների վիճակը, բացառությամբ Հոբարձի գյուղի ճանապարհի, որն ունի հիմնանորոգման կարիք, ինչպես նաև ընթացիկ նորոգման կարիք ունեցող Պուշկինոյի ճանապարհի:

*5. Կրթական, առողջապահության և մշակութային ենթակառուցվածքներ*

Բացառությամբ Պուշկինոյի, մանկապարտեզներ կան համայնքի բոլոր գյուղերում: Գյուլագարակի՝ 90 երեխայի համար նախատեսված մանկապարտեզը պետք է շահագործվի 2018 թվականից:

22 երեխայի համար նախատեսված (13 երեխայով) և ընթացիկ նորոգման կարիք ունեցող մանկապարտեզ ունի Ամրակիցը, 40 երեխայի համար նախատեսված (20 երեխայով)

բավարար վիճակում գտնվող՝ Գարգառը: Ընթացիկ նորոգման կարիք ունեն Հոբարձիի՝ 60 երեխայի համար նախատեսված (35 երեխայով) և Վարդաբլուրի՝ 40 երեխայի համար նախատեսված  և նույնքան երեխայով մանկապարտեզները: Հիմնանորոգման կարիք ունի Կուրթանի մանկապարտեզը, որը նախատեսված է 70 երեխայի համար և ունի 50 երեխա:

Համայնքի գյուղերում գործում են հետևյալ հանրակրթական հաստատությունները՝

- Գյուլագարակի միջնակարգ դպրոցը՝ նախատեսված 500 աշակերտի համար և 380 փաստացի աշակերտով,
- Ամրակիցի միջնակարգ դպրոցը՝ նախատեսված 240 աշակերտի համար և 50 փաստացի աշակերտով,
- Գարգառի միջնակարգ դպրոցը՝ նախատեսված 190 աշակերտի համար և նույնքան փաստացի աշակերտով,
- Կուրթանի միջնակարգ դպրոցը՝ նախատեսված 784 աշակերտի համար և 175 փաստացի աշակերտով,
- Հոբարձիի միջնակարգ դպրոցը՝ նախատեսված 150 աշակերտի համար և 80 փաստացի աշակերտով,
- Պուշկինոյի հիմնական դպրոցը՝ նախատեսված 100 աշակերտի համար և 60 փաստացի աշակերտով,
- Վարդաբլուրի միջնակարգ դպրոցը՝ նախատեսված 320 աշակերտի համար և 140 փաստացի աշակերտով:

Գյուլագարակի և Վարդաբլուրի դպրոցներն ընթացիկ նորոգման կարիք ունեն, մնացած գյուղերի դպրոցները բավարար վիճակում են: Այսուհանդերձ, բացի Գարգառի դպրոցից, մյուս դպրոցները թերբեռնված են:

Համայնքի գյուղերում երաժշտական, գեղարվեստի և սպորտային դպրոցներ չկան:

Բավարար վիճակում գտնվող, գործող մշակույթի տներ ունեն Գյուլագարակը (300 տեղ)  և Գարգառը (220 տեղ): Կուրթանի (500 տեղ) և Վարդաբլուրի (130 տեղ) մշակույթի տները չեն գործում և հիմնանորոգման կարիք ունեն: Ամրակիցում, Հոբարձիում և Պուշկինոյում մշակութային հաստատություններ չկան:

Առողջապահական հաստատությունների վիճակը համայնքի կազմում գտնվող բնակավայրերում կարելի է մասնակիորեն բավարար համարել: Գյուլագարակը,  Ամրակիցը և Պուշկինոն ունեն  բավարար վիճակում գտնվող բուժկետեր, Հոբարձիի բուժկետը հիմնանորոգման կարիք ունի:

Բավարար վիճակում գտնվող ամբուլատորիաներ ունեն Գարգառը, Կուրթանը և Վարդաբլուրը:

Կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների տարածքային տեղաբաշխումը համայնքի գյուղերում ներկայացված է քարտեզի վրա:




*Հապավ.-Ա-Ամբուլատորիա, ԲԿ-Բուժկետ, Հ-Հիվանդանոց, ՄՏ-Մշակույթի տուն, ՄՊ-Մանկապարտեզ, ՀԴ-Հիմնական դպրոց, ՄԴ-Միջնակարգ դպրոց,*

Համայնքների խոշորացման չափանիշներով և խոշոր համայնքի տեսլականով սահմանված պահանջների ընդհանրացված գնահատականները Գյուլագարակ համայնքի համար ներկայացված են 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5. Գյուլագարակ համայնքի խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ գնահատական

| | **Խոշորացման պայմաններ և չափորոշիչներ** | **Ցուցանիշի գնահատական** | **Ծանոթություն** |
|---|---|---|---|
| 1 | Բավարար մարդկային ռեսուրսներ և առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոն | Բավարար չէ | Դրական գործոն է Գյուլագարակի բնակչության աճի միտումը |
| 2 | Բավարար բնական (հողային) ռեսուրսների առկայություն | Բավարար է | |
| 3 | Ֆինանսական ռեսուրսների առկայություն | Բավարար չէ | |
| 4 | Տրանսպորտային կապեր | Բավարար է | |
| 5 | Ավտոճանապարհների վիճակ | Բավարար է | |
| 6 | Նախադպրոցական հիմնարկներ | Բավարար է | |
| 7 | Կրթական հաստատություններ | Բավարար է | |
| 8 | Առողջապահության օբյեկտներ | Մասնակիորեն բավարար է | Ցանկալի է Գյուլագարակում հիվանդանոց կառուցել |
| 9 | Մշակութային օբյեկտներ | Մասնակիորեն բավարար է | Ցանկալի է Գյուլագարակում մարզամշակութային կենտրոն ստեղծել |
| 10 | Ընդհանուր սահմանի առկայություն | Առկա են | |
| 11 | Համայնքի կենտրոնի կենտրոնական դիրք | Բավարար է | |
| 12 | Բնակիչների համատեղելիություն և | Բավարար է | |

| | | | |
|---|---|---|---|
| | մենթալություն | | |

Այսպիսով, ընտրված 12 պայմաններից և չափանիշներից Գյուլագարակ խոշորացված համայնքը լիարժեքորեն բավարարում է 8-ին, մասնակիորեն բավարար՝ 2-ին:

Հիմնական շեղումներն են՝

- համայնքի կենտրոնի բնակչության թիվը,
- սեփական եկամուտների միջինացված ցուցանիշը պակաս է հանրապետության գյուղական համայնքների համարժեք միջին ցուցանիշից (այս ցուցանիշի բավարարության մակարդակը պայմանական բնույթ ունի, ուստի այն կարելի է անտեսել),
- մարզամշակութային օբյեկտների սակավությունը, համայնքի կենտրոնում հիվանդանոցի կամ ամբուլատորիայի բացակայությունը:

***Որպես առկա շեղումները չեզոքացնելու, ինչպես նաև համայնքի զարգացմանը նպաստող հիմնական միջոցառումներ պետք է դիտարկել՝***

- Գյուլագարակում մարզամշակութային կենտրոնի կառուցումը կամ մշակույթի տան ընդլայնումն ու արդիականացումը, հիվանդանոցի կառուցումը,

Ինչ վերաբերում է համայնքի կենտրոնի բնակչության թվաքանակին, կարելի է դրական գործոն համարել դրա աճի միտումը, ինչը համայնքի խոշորացման արդյունքում կայուն զարգացման նախադրյալներ ստեղծելու պարագայում կարող է տեսանելի ապագայում հասնել անհրաժեշտ նվազագույն թվաքանակին:

***Գյուլագարակ համայնքի կազմավորումը կարող է ապահովել համայնքների խոշորացման հայեցակարգում ամրագրված հետևյալ հիմնական արդյունքները՝***

1. Մարդկային ռեսուրսների համախմբումը, ինչը թույլ կտա բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը (որակյալ կադրեր, ընդլայնված կառավարման օբյեկտ, և այլն),

2. Ենթակառուցվածքների համախմբումը, ծառայությունների մատուցման հասանելիության ապահովումը և արդյունավետության բարձրացումը, ինչը թույլ կտա կենտրոնացնել բնական ռեսուրսները և դրանց կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, մշակել և իրականացնել համայնքային քաղաքականություն, որը փոքր համայնքներից շատերում բացակայում է,

3. Միավոր ծառայության վրա կատարվող ծախսերի նվազեցումը և ծառայությունների շրջանակի ընդլայնումը,

4. Ենթակառուցվածքների զարգացման և արդիակացման (առողջապահական, մշակութային հաստատություններ և այլն) գծով ներդրվող գումարների առավել նպատակային և կենտրոնացված օգտագործումը,

5. Համապետական ծրագրերի իրականացման հնարավորությունների մեծացումը, այդ թվում՝ զբոսաշրջության և առողջարանների ցանցի զարգացման ուղղությամբ,

6. Տնտեսության ճյուղերի՝ գյուղատնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծումը,

7. Բնական պաշարների հասանելիությունը և դրանցից օգտվելու հնարավորության ապահովումը գործնականում բոլոր բնակավայրերի բնակիչների համար:

Բացի թվարկված ընդհանուր արդյունքներից, Լոռու մարզում տարաբնակեցման համակարգի նոր տեղային (զարգացման) կենտրոնի ստեղծումը թույլ կտա հետընթաց ապրող գյուղերի բնակչության համար ապահովել հանրային ծառայությունների հասանելիության պատշաճ մակարդակ, ինչը նախադրյալներ կստեղծի դրանց կայուն զարգացման համար:

Միաժամանակ, նոր ձևավորվող համայնքում ենթակառուցվածքների արդյունավետ տեղաբաշխման, դրանց պակասող օղակների լրացման խնդիրներում համալիր մոտեցումներ ապահովելու նպատակով ցանկալի է Գյուլագարակ համայնքի համար մշակել դրա տարածքային զարգացման նախագիծը:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:


**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**

Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de